ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 25 - Ա
« 05 » ՓԵՏՐՎԱՐԻ 2025Թ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 35-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում քարի վերամշակմամբ զբաղվող տնտեսվարող կազմակերպությունների բնապահպանական օրենսդրության նորմերի պահպանման ու կատարման նկատմամբ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Ուսումնասիրությունների արդյունքների, դրանց ընթացքի մասին պարբերաբար պատշաճ տեղեկացնել բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2024թ. փետրվարի 05-ի
թիվ 25-Ա որոշման

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՔԱՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Մարգարյան Գեղամ - Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար
2. Հովսեփյան Սարո – Վայոց ձորի մարզպետի խորհրդական
3. Սարոյան Նաիրի - Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի տեղակալ
4. Սաֆարյան Լևոն - Վայոց ձորի մարզպետի տեղակալի օգնական
5. Օհանյան Աշոտ – Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ